



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Երեքշաբթի, 26 Յունուարի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց Հայկական Ոսկրածուծի Հիմնադրամը ներկայացնող պատուիրակուծին մը, որ կազմակերպութեան նախագահ Տոքթ. Ֆրիտա Ճորտընի գլխաւորութեամբ Ազգ. Առաջնորդարան եկած էր Առաջնորդ Սրբազանը տեղեակ պահելու իր տասնամեակին առիթով նախատեսուած ձեռնարկներուն ու աշխատանքներուն: Հանդիպումին ներկայ եղաւ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան:

Հայրենի ժողովուրդին բժշկական ու բժշկագիտական իւրայատուկ օժանդակութիւն հասցնող այս հիմնադրամը հիմնականին մէջ ծառայութիւն կը մատուցէ դժուար բուժելի հիւանդներու: Անկա Հայաստանի մէջ հաստատած է կեդրոն մը, որուն համար նպաստ կ'ապահովէ սփիւռքեան ու յատկապէս Միացեալ Նահանգներու հայկական օճախներէն, արձանագրելով ոսկրածուծի պատուաստումի համար կամաւոր թեկնածուներ:

Պատուիրակութեան անդամները Առաջնորդ Սրբազանին տեղեկութիւններ հաղորդեցին իրենց աշխատանքներուն ընթացքին մասին, որուն նորագոյն օղակը կազմուած է տարեսկիզբին, Արցախի մէջ, ուր պետական եւ հոգեւոր պատասխանատուներ անձանագրուած են Հիմնադրամի ցանկին:

Նկատի ունենալով, որ Հիմնադրամը այս տարի կը բոլորէ իր տասներորդ տարին, վարչութիւնը որոշած է կազմակերպել շարք մը ձեռնարկներ ու քարոզչական արշաւներ, որոնք մեկնարկի հանդիպումը տեղի պիտի ունենայ 9 Փետրուարի երեկոյեան, «Ֆենիսիա» ճաշարանին մէջ: Պատուիրակութիւնը խնդրեց Առաջնորդ Սրբազանէն, որ Ազգ. Առաջնորդարանը, մեր եկեղեցիներն ու Ազգ. Վարժարանները նեցուկ կանգնին այս աշխատանքներուն:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Հայկական Ոսկրածուծի Հիմնադրամին առաքելութիւնը ու անոր նուիրեալներուն ծառայութիւնները: Ան վերահաստատեց Ազգ. Առաջնորդարանին ու անոր հովանիին տակ գործող միաւորներուն զօրակցութիւնը՝ այս աշխատանքներուն, նշելով, որ

ընթացք պիտի տրուի ներկայացուցած խնդրանքին: Պատուիրակութիւնը շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանի ու Ազգ. Առաջնորդարանի հետեւողական աջակցութեան համար:

## **PRELATE WELCOMES ARMENIAN BONE MARROW DONOR REGISTRY REPRESENTATIVES**

On the evening of Tuesday, January 26<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy a delegation from the Armenian Bone Marrow Donor Registry (ABMDR), headed by Board of Director's president Dr. Frieda Jordan. Joining the Prelate at the meeting was Very Rev. Fr. Muron Aznikian.

The delegation had come to keep the Prelate abreast of the events planned for the organization's 10<sup>th</sup> anniversary which will be celebrated this year.

The guests informed the Prelate of the organization's recent endeavors, including a donor recruitment drive which took place in Artsakh at the start of the year.

The organization is planning a number of events throughout the year to mark its 10<sup>th</sup> anniversary, the first of which is a kick-off to take place on February 9<sup>th</sup>, at Phoenicia Restaurant.

The Prelate highly commended the mission of the ABMDR and the dedication of the volunteers who are devoted to this cause. He reaffirmed that the Prelacy and all bodies under its jurisdiction remain committed to this cause and will lend their support wholeheartedly, for which the representatives expressed their thanks to the Prelate.